«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ «Սաների հայրենաճանաչողության ձևավորման կարևորությունը»

Հաստատություն՝ *Երևանի հ. 30 մսուր-մանկապարտեզ*

Դաստիարակ՝ *Լիլիթ Միրզոյան*

Ղեկավար՝ *Ժաննա Ավետիսյան*

2023թ

Բովանդակություն

Ներածություն..... 2

Գլուխ 1… 3-7

1.1……..3-4

1.2……..5-7

Գլուխ 2… 8-9

2.1……..9

2.2……10-12

Դիտարկում .....……13-15.

Եզրակացություն ..... ……16

Օգտագործված գրականության ցանկ..... 17

Ներածություն

Արդի ժամանակներում առավել կարևորվում է 5-6 տարեկան սաների հայրենաճանաչողության ձևավորման կորևորությունը: Հայրենաճանաչողության ձևավորման կարևորությունը նպաստում է երեխաների մեջ սերմանելու սեր դեպի հայրենիքը: Երեխան այնքանով կարող է պաշտպանել իր հայրենիքը, որքանով ճանաչում է այն և այդ ճանաչողությունն է իր հետ բերում կապվածություն, սեր և նվիրում դեպի հայրենիք:

Հայրենիքն թանկարժեք տարածք է, ուստի մենք պարտավոր ենք այն ամբողջությամբ պահպանել և փոխանցել հաջորդ սերունդներին: Մեր ազգի ծագմանն ինքնանվան առաջացման մասին առաջնային է Մովսես Խորենացու <<Հայոց պատմությունը>>:

Շատ կարևոր է հայրենաճանաչողության դասեր անցկացվեն, որի արդյունքում մենք կունենաք հայրենասերներ:

Հետազոտության նպատակն է `

1. Մեթոդների միջոցով բարձրացնել սաների հայրենաճանաչողության թեմայի կարևորության մասին:
2. Սաներին պատմել պատմաշկակութային վայրերի մասին:
3. Խնդրահարույց իրավիճակների ստեղծումը օգտագործել, որպես սաների մոտիվացման և ստեղծագործական ու քննադատական մտածողության զարգացման միջոց:

Հետազոտության խնդիրներն են՝

- ուսումնասիրել քննարկվող հարցի վերաբերյալ մասնագիտական գրականություն

- հիմնավորել հայրենաճանաչողության ուսուցման դաստիարակչական նշանակությունը. Մեր հայրենիքի խորհրդանիշների՝ դրոշի, զինանշանի և օրհներգի միջոցով ուսումնասիրել և ճանաչել հայրենիքը

Գլուխ 1

Հայրենաճանաչողության ձևավորման կարևորությունը նախադպրոցական տարիքի երեխաների համար

Հայրենասիրության պատմական աղբյուրը դարերով ու հազարամյակներով առանձին պետությունների գոյատևումն է որոշակի վայրում, ինչի արդյունքում ձևավորվում է կապվածություն հայրենի հողին, լեզվին ու ավանդույթներին, այն ներառում է ազգայնականությանը հատուկ մի շարք եզրույթներ: Ազգերի կազմավորման ու ազգային պետությունների ստեղծման պայմաններում հայրենասիրությունը դառնում է հասարակական գիտակցության բաղադրիչ մաս: Հայրենաճանաչողությունը բովանդակում է դաստիրակչական վիթխարի ներուժ, հայրենասիրություն և ազգային արժանապատիվ գոյություն: Դասին ներկայացվող կարևորագույն պահանջ և յուրաքանչյուր դասի բնորոշ հատկանիշ է ուսումնական նպատակի հստակությունը, դաստիարակող և զարգացնող խնդիրների անխզելի կապը և այդ խնդիրների հստակ ու հետևողական իրագործումը: Դասի ուսումնական դաստիրակչական և զարգացնող խնդիրները, երեխաների տարիքը, նրանց գիտելիքների մակարդակը խնդիրները: Երեխաների տարիքը, նրանց գիտական մակարդակը, հմտություններն ու կարողությունները համատեղ պայմանավորում են նյութի ընտրությունը, դրանում գլխավորի առանձնացումը, ինչպես նաև դասապրոցեսի ժամանակ դաստիարակի օգտագործած մեթոդներն ու հնարները: Երեխաների տարիքը, նրանց գիտական մակարդակը, հմտություններն ու կարողությունները համատեղ պայմանավորում են նյութի ընտրությունը, դրանում գլխավորի առանձնացումը, ինչպես նաև դասապրոցեսի ժամանակ դաստիարակի օգտագործած մեթոդներն ու հնարները: Նույն խմբի սանն ավելի ազատ է արտահայտում իր մտքերն ու դատողություններ, գործում է անկաշկանդ, ինչն էլ նպաստում է ուսուցման

արդյունավետ կազմակերպմանը։ Հատկապես նախադպրոցական տարիքում առանձնահատուկ զգացմունքայնությունը, ինքնասիրությունը, որ հաճախ արտահայտում է նրանց ինքնահաստատման և հասուն երևալու ձգտումը, մանկավարժից պահանջում է անհրաժեշտ նրբանկատություն, հարգանք փոքրիկի նկատմամբ։ Ելնելով վերոգրյալից՝ կարող ենք եզրահանգել, որ երեխայի արժեքային համակարգի ձևավորումը ժամանակակից կրթության գերխնդիրն է և մշտապես պետք է լինի մանկավարժների ուշադրության կենտրոնում։

Չկա ոչինչ հայրենիքից առավել սիրելի։

Ի՞նչ է հայրենասիրությունը

Հայրենասիրության գաղափարն առանձնահատուկ տեղ է գրավում ոչ միայն հասարակության հոգևոր կյանքում, մշակույթում, այլ նաև նրա գործունեության բոլոր կարևորագույն ոլորտներում՝ քաղաքականության, տնտեսության, գաղափարախոսության, բնապահպանության մեջ։

Հայրենասիրությունը ենթադրում է մարդու դրական հատկանիշերի համալիր ձևավորում և զարգացում: Նրա հիմքում ընկած են հոգևոր-բարոյական և սոցիալ-մշակութային բաղադրատարրեր: Հայրենասիրությունը հանդես է գալիս հայրենիքի հետ իր անբաժանելի լինելն ու միասնականությունը գիտակցող անձի հոգևոր արժեքների, քաղաքացիականության և սոցիալական ակտիվության հետ միասին: Էությամբ այն միասնական է, բայց միևնույն ժամանակ բազմաբնույթ է իր դրսևորումներում: Սակայն առայսօր դեռ չի ձևավորվել միասնական, բոլորի կողմից ընդունելի կարծիք, թե ինչ պետք է հասկանալ հայրենասիրություն ասելով:

Կարելի է ներառել այն տեսակետներն ու դատողությունները, որոնք հայրենասիրությունը սահմանում են որպես հայրենիքի հանդեպ սիրո վեհ զգացմունք: Այս ուղղությունը բնորոշվում է բնության, հայրենի տան, ծննդավայրի, մանկության պատկերների հանդեպ սիրո վերացական դրսևորմամբ:

Հայրենասիրության՝ որպես բարձրագույն, առավել կարևոր ու էական զգացմունքներից մեկի ըմբռնման վրա: Սակայն այստեղ, հուզական կողմի հետ մեկտեղ, ներառվում է նաև գործնական տեսանկյուն. հայրենասիրական զգացմունքի ուժը չի սահմանափակվում հայրենիքի հանդեպ սոսկ սիրո խորությամբ ու վեհությամբ, այլ մղում է ակտիվ գործողությունների՝ հանուն սեփական հայրենիքի բարօրության:

Հայրենասիրությունը դիտարկում է, որպես հասարակական երևույթ, որի բովանդակությունն ու բնույթը նշանակալի չափով պայմանավորվում են հասարակության, պետության պատմական զարգացման առանձնահատկություններով, իշխող ընտրախավի քաղաքականությամբ: Խորհրդային հասարակական համակարգի պայմաններում հայրենասիրությունը գաղափարախոսական կարևորագույն հիմքերից մեկն էր, հանդես էր գալիս աճող սերնդի դաստիարակության առանցքային ուղղությունների շարքում:

Հայրենասիրության էությունը անձի բարձրագույն արժեքն է: Որպես հայրենասիրության սուբյեկտ շատ հաճախ դիտարկում են անձին:

Հայրենասիրությունն ըմբռնվում է որպես անձի հոգևոր զարգացման, ինքնարտահայտման կարևորագույն փուլ: Դա հայրենասիրության բարձր

մակարդակ է, քանի որ անձի հոգևոր ինքնադրսևորումը ենթադրում է կարևորագույն կողմերի և որակների մի ամբողջության դրսևորում, որոնք բնութագրվում են իրենց ձևակերպվածության լիարժեքությամբ, ամբողջությամբ, կատարելությամբ: Անձի այդ որակները ենթադրում են կրոնականբովանդակություն, ինչը հնարավորություն է տալիս այդ ուղղությունն անվանել հոգևոր-կրոնական: Հոգևոր-կրոնական հայրենասիրությունն ունի ամենամեծ և ամենահարուստ ավանդույթը, խոր և հզոր արմատներ:

Հայրենասիրությունը, եթե նկատի ունենանք ծագումը, առաջանում և զարգանում է, որպես զգացմունք, որն ավելի ու ավելի է սոցիալականացվում և վեր հառնում հոգևոր-բարոյական հարստացման միջոցով: Հայրենասիրական զգացմունքի ըմբռնումը անբաժանելիորեն կապված է նրա գործունեության հետ, ինչն առավել կոնկրետ պլանով դրսևորվում է ակտիվ սոցիալական գործունեությամբ, գործողություններով և արարքներով, որ կատարվում են մարդու կողմից՝ ի բարօրություն հայրենիքի:

Հայրենասիրությունը՝ բնույթով որպես խորապես սոցիալական երևույթ, հասարակության գոյության և զարգացման հզոր աղբյուր է, հանդես է գալիս որպես մարդու կենսունակության, իսկ երբեմն էլ նրա կենսակայունության բնութագրիչ:

Հայրենասիրության բնորոշ դրսևորումներից մեկը հզոր պետականության երազանքն է: Այն արտացոլում է մեր հասարակության պատմական զարգացման յուրահատկությունը: Այդպիսի հայրենասիրության կարևոր գործոն է պետությունը: Ներկայումս հայ հասարակության զարգացման, ժամանակակից պետության ստեղծման համար կարևորագույն պայման է համարվում հայրերասիրության վերածնունդը:

Իսկական հայրենասիրությունը նրա հոգևոր բնույթի մեջ է: Հայրենասիրությունը կարևորագույն գործոն է սոցիալական խմբում անձի առավել լիարժեք դրսևորման համար: Այն ենթադրում է հայրենիքին անշահախնդիր, անմնացորդ ծառայություն:

Ելնելով այս ամենից՝ կարելի է ընդհանրացնել հայրենասիրության առավել էական կողմերը և սահմանել այն:

Հայրենասիրությունը անձի առավել նշանակալից բարոյական արժեքներիցէ, անհատի կարևորագույն հոգևոր ձեռքբերումը, որը բնութագրում է նրա զարգացման բարձրագույն մակարդակը և արտահայտվում է ինքնադրսևորման ակտիվ գործունեությամբ՝ ի բարօրություն հայրենիքի:

«Այն բարեփոխումները, որոնք կոչված են վերածնելու Հայաստանը, չեն կարող իրենց հիմքում ունենալ բացասական և հակասոցիալական գաղափարներ ու բարքեր»:

Գլուխ 2

Հայրենաճանաչողության ուսուցման դաստիարակչական նշանակությունը

Նախադպրոցական տարիքը երեխայի անհատականության զարգացմանշրջանն է: Մտածելով հայրենասիրական զգացմունքների ծագման մասին նրանք միշտ դիմում են մանկության տպավորություններին. Սա պատուհանի տակի ծառն է, սա այն փողոցն է որով նրանք քայլել են, և հայրենի մեղեդիները:

Հենց այս շրջան նպաստավոր է հայրենասիրական զգացմունքների դաստիարակման համար: Հայրենասիրության զգացումը պետք է լինի գիտակցված ու ուժեղ: Հետաքրքրություն առաջացնել երեխայի մոտ հայրենի հողի, հայրենիքի հանդեպ սիրո զգացողության ձևավորում՝ հայրենի մշակույթին և ավանդույթներին ծանոթանալու համար:

Ժամանակակից հանրակրթարանի խնդիրներից է երեխաներին ծանոթացնել հայ ժողովրդի պատմամշակութային ժառանգությանը, նպաստել երեխաների հայրենասիրական դաստիարակությանը: Այն տեղի է ունենում նաև երաժշտության ուսուցման գործընթացում, հայրենասիրական

կատարողականությունը ուսուցանելիս: Այս հետազոտության թեմայի արդիականությունը պայմանավորվում է նրանով, որ հենց հայրենիքի համար պայքարին, հայրենիքին, հայրենիքի պաշտպան հերոսներին, զինվորներին ու բանակին նվիրված ազգային ազատագրական, ժողովրդական ռազմի ու զինվորի երգերն են ազդում կրթվող սերունդների հայրենասիրական դաստիարակության գործընթացի արդյունավետության վրա, նրանց տալիս բարոյական բարձր ուղենիշներ և նպաստում ազգային արժեհամակարգի ձևավորմանը: Հայրենասիրական երգերի, ազգային-ազատագրական ու ժողովրդական երգերի ուսուցման նշանակությունը և կարևորությունը, վերջիններս օժտված են երեխայի արժեհամակարգի ձևավորման և նրանց մեջ հայրենասիրություն դաստիարակելու հսկայական ներուժով:

Մեր հայրենիքի խորհրդանիշները

Պետական դրոշը որոշակի գույնի (գույների) ու չափի պաստառ է՝ ամրացված սրածայր ձողի վրա: Դրոշը գործածվել է դեռևս Հին աշխարհի երկրներում՝ առավելապես ռազմական նպատակներով՝ որպես զինվորների հավաքի ու համախմբվելու, հեռվից լավ տեսանելի նշան:

Դրոշի օգտագործման վերաբերյալ հայոց ամենավաղ տեղեկությունը կապված է Հայկ Նահապետի անվան հետ. գալով Բզնունյաց ծովի (Վանա լիճ) շրջանը՝ նա իր դրոշն է պարզել մի ժայռի վրա:

Արյունից ծորած երիզ մի կարմիր,

Երկնքից պոկված կտոր մի կապույտ,

Հասուն հասկերի շող նարնջագույն,

Եվ դարերի հավատի դրոշ Եռագույն:

Անդրանիկ Ծառուկյան,

բանաստեղծ

Հայաստանի Հանրապետության դրոշը եռագույն դրոշն է՝ կարմիր, կապույտ, նարնջագույն, հորիզոնական հավասար շերտերով՝ լայնության և երկարության 1:2 հարաբերությամբ:

Կարմիրը խորհրդանշում է հայ ժողովրդի մշտական պայքարը՝ հարատևման, Հայկական բարձրավանդակի, քրիստոնեական հավատի, Հայաստանի անկախության և ազատության համար, կապույտը՝ ապրելու կամքը խաղաղ երկնքի ներքո, նարնջագույնը՝ հայ ժողովրդի արարչական տաղանդն է:

Պետական դրոշը ծածանվում է հանրապետության նախագահի նստավայրի, Ազգային ժողովի, Կառավարության, Սահմանադրական դատարանի, պետական տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, դատարանների, դատախազությունների, Մարդու իրավունքների պաշտպանի, Կենտրոնական բանկի, դիվանագիտական ներկայացուցչությունների, հյուպատոսությունների շենքերի և փոխադրամիջոցների վրա, ինչպես նաև օրենքով սահմանված այլ տեղերում:

Պետական դրոշը բարձրացվում է հանրապետությունում մարզական պաշտոնական առաջնությունների բացման և իջեցվում փակման արարողությունների ժամանակ, բարձրացվում է նաև հայ մարզիկներին միջազգային մրցումներում մրցանակային պարգևներ հանձնելիս:

<u>Պետական զինանշան</u>

Պետական զինանշանը խորհրդանշում է երկրի հասարակական-քաղաքական կարգը: Զինանշանների սաղմերն ի հայտ են եկել նախնադարյան հասարակարգում, առկա են նաև Հին աշխարհի ժողովուրդների բազմաթիվ խորհրդանշային պատկերներում:Հայաստանի Հանրապետության զինանշանը Հայաստանի առաջին հանրապետության զինանշանն է: Հեղինակներն են ճարտարապետ Ալեքսանդր Թամանյանը և նկարիչ Հակոբ Կոջոյանը:

Զինանշանի կենտրոնում՝ վահանի վրա, պատկերված են Արարատ լեռը՝ Նոյյան տապանով, և պատմական Հայաստանի 4 թագավորությունների՝ Բագրատունիների (վերևից՝ ձախ), Արշակունիների (վերևից՝ աջ), Արտաշիսյանների (ներքևից՝ ձախ), Ռուբինյանների (ներքևից՝ աջ) զինանշանները: Վահանը պահում են արծիվը (ձախից) և առյուծը (աջից), իսկ վահանից ներքև պատկերված են սուր, ճյուղ, հասկերի խուրձ, շղթա ։

Պետական օրհներգ

Պետական օրհներգը հանդիսավոր երաժշտական ստեղծագործություն է՝ գրված ծրագրային բնույթի բանաստեղծության խոսքերով:

Հայաստանի Հանրապետության օրհներգը Հայաստանի առաջին հանրապետության օրհներգն է՝ «Մեր հայրենիքը» (խոսքը՝ որոշ փոփոխություններով, Միքայել Նալբանդյանի, երաժշտությունը՝ Բարսեղ Կանաչյանի):

Պետական օրհներգը պարտադիր հնչում է պաշտոնական հանդիսությունների ժամանակ պետական դրոշը բարձրացնելիս, նորընտիր նախագահի երդման արարողության, Ազգային ժողովի նստաշրջանների, հանրապետությունում անցկացվող զորահանդեսների, միջազգային և համապետական մարզական մրցումների պաշտոնական բացման ու փակման, միջազգային մրցաշարերում մրցանակային տեղեր գրված մարզիկներին պարգևների հանձնման հանդիսավոր արարողությունների ժամանակ, ինչպես նաև օրենքով սահմանված այլ դեպքերում: Երբ հնչում է պետական օրհներգը, ներկաները ոտքի են կանգնում և դեմքով շրջվում դեպի պետական դրոշը, տղամարդիկ հանում են գլխարկները:

Պարապմունք

Թեմա՝ <<Իմ հայրենիքը>>

Խնդիրները

- . Երեխաներին ծանոթացնել Հայաստանի քարտեզին, ՀՀ զինանշանին, դրոշին,ընդհանրացնել տարվա ընթացքում երեխաների ստացած տեղեկությունները մեր երկրի հայտնի վայրերի մասին: Դաստիարակել սիրո և հպարտության զգացում:
- Զարգացնել երեխաների խոսքը
- Պարապմունքների ժամանակ ստացած գիտելիքների հիման վրա երեխաներին սովորեցնել հյուսել կապակցված փոքրիկ պատմություններ՝ առաջարկվող թեմայի շուրջ, ամրապնդել հարցերին պատասխանելու նրանց ունակությունը, մասնակցել զրույցին:
- Շարունակել աշխատանքը ստեղծագործական բովանդակությունն առանց բացթողման պատմելու, արտահայտիչ խոսք կառուցելու կորողությունների ձևավորման շուրջ:
- Հարստացնել երեխաների բառապաշարը, սովորեցնել խոսքի մեջ գործածել ածականներ և դրանք համակցել գոյականների հետ:

Անհրաժեշտ պարագաններ՝

ՀՀ քարտեզը, դրոշը, զինանշանը, օրհներգը, նկարներ Հայաստանի քաղաքների և գյուղերի մասին:

Պարապմունքի ընթացքը-

Բանաստեղծություն Հայրենիքի մասին, ունկնդրման և քննարկման համար:

Զրույց բանաստեղծության բովանդակության շուրջ.

- Ինչի՞ մասին է հեղինակը պատմում բանաստեղծության մեջ;
- Ի՞նչ է նշանակում Հայաստան բառը մեր բոլորի համար:
- Ինչպե՞ս են անվանում մեր հանրապետությունը:
- Եկենք քարտեզի վրա ցույց տանք Հայաստանի տարածքը:
- Ուշադիր դիտեք քարտեզը և որոշեք՝ որ գույներն են գերիշխում Հայաստանի տարածքում:

Ֆիզկուլտ դադար-

Երեխաները կանգնում են շրջանաձև և կատարում են բանաստեղծության բովանդակությանը համապատասխան շարժումներ:

Զրույց ՀՀ խորհրդանիշների մասին

Դաստիարակ-

Երեխաներ, յուրաքանչյուր հանրապետություն ունի երեք տարբերակիչ, իրեն բնորոշ նշան՝դրոշը, զինանշանը և հիմներգը:

Եկեք երգենք կարմիր, կապույտ, ծիրանագույն երգը, մեր դրոշի մասին:

Մեկնաբանենք դրոշի գույների նշանակությունը:Ցուցադրենք դրոշը, որը ավելի տեսանելի է դարձնում պարապմունքը:

Վերջում լսել <<ՀՀ ՕՐՀՆԵՐԳԸ>>:

Դիտարկում

Պարապմունքի պլանավորումը համապատասխանում է տարիքային խմբի ծրագրին:Ընտրված անհրաժեշտ պարագաները, նկարները նույնպես համապատասխանեցված են պարապմունքին: Պարապմունքի տեսակը՝ զրույց: Դաստիարակի խոսքը հստակ է, մատչելի, գրական, ձայնային տեմբրը մեղմ: Պարապմունքը տարվել է ԽԻԿ համակարգով, պահպանվել է տևողությունը:

Կիրառվել է մեթոդներ, հնարներ .հարցադրում, վերապատմում, խաղային մեթոդներ, ոտանավորի ուսուցում, նկարների միջոցով պատմում:

Դաստիարակը կարողացավ հասնել պարապմունքի նպատակին՝ ըստ որի անհրաժեշտ է երեխաներին տալ գիտելիքներ հայրենիքի, հայկական բանակի ստեղծման մասին, դաստիարակել հպարտության զգացում, զարգացնել ստեղծագործական միտքը, կապակցված խոսքը, հարստացնել բառապաշարը, երեխաներին ծանոթացնել ՀՀ քարտեզին, դրոշին և զինանշանին:

Եվ, որ ամենակարևորն էր՝ պարապմունքի ավարտին երեխաները կարողացան պարապմունքի ընթացքում ստացած գիտելիքների շնորհիվ հյուսել կապակցված խոսք՝ փոքրիկ պատմություններ ներկայացնելով: Պարապմունքի ընթացքում երեխաները ունկնդրեցին հայրենասիրական բանաստեղծություն, երաժշտություն, երգեր և կիրառվեց ֆիզկուլտ

դադար:Երեխաները ոգևորված էին, շատ ակտիվ, հայրենասիրական ոգով, տրամադրությամբ, ընդգրկված էին բոլոր երեխաները, կատարվեց նաև ենթախմբային աշխատանքներ:

Որպես առաջարկություն կառաջարկեյի պարապմունքի ավարտից հետո զբոսանք կազմակերպել և այցելել քաղաքի մոտակա զորամաս՝ բանակի առօրյային ծանոթանալու նպատակով:

Եզրակացություն

Պարապմունքի ընթացքում կատարվեց ուսումնասիրություն՝ <<Հայրենաճանաչողության ձևավորման կարևորությունը>> թեմայով: Կարծում եմ կիրառված մեթոդների միջոցով որոշակիորեն գիտելիքներ փոխանցվեց երեխաներին՝ հայրենաճանաչողության բոլոր զգայարանների միջոցով՝ հոգի, սիրտ, միտք եռամիասնության մշտական կիրառմամբ:

Պարապմունքը նպաստեց ինքնություն և քաղաքակրթությունների արժեհամակարգերը ճանաչող անհատի ձևավորմանը, որն էլ միտված կլինի իր գործունեությամբ նպաստելու հայ հասարակության զարգացմանն ու վերափոխմանը՝ այն սկսելով հենց անձից:

Այս հետազոտական աշխատանքի թեման, անկասկած շատ մեծ նշանակություն ունի երեխայի համար: Հենց այս պատճառով է, որ կրթական բոլոր ոլորտներում պետք է դրվի հայրենաճանաչողության կարևորության հարցը: Շատ կարեւոր է, որ մանկապարտեզներում ու դպրոցներում հայրենաճանաչության դասեր անցկացվեն, որի արդյունքում մենք կունենանք հայրենասերներ: Այսօր հանրակրթական դպրոցներում և նույնիսկ համալսարաններում հայրենաճանաչության վերաբերյալ դասընթացները շատ ցածր հիմքերի վրա են: Փոքր է մեր հայրենիքը ու փոքր ազգ ենք, բայց մեծ պատմություն ունենք,բարձր մարդկային արժեքներ:Թեև քիչ ենք,բայց աշխարհի ամեն մի անկյունում ունենք շատ հայտնի հայեր,ովքեր իրենց գործնեությամբ

միշտ բարձր են պահում հայ ազգի պատիվը:Քիչ ենք,բայց ամեն մի դժվար պահին միասնական,մի մարդու նման ենք դառնում ու ավելի ուժեղ,քան ցանկացած երկիր:

Քիչ ենք,այո,բայց դարերի ընթացքում կարողացել ենք պահպանել մեր ազգը,կրոնը,մեր գիր ու գրականությունը,մեր մշակույթը ու թույլ չենք տվել ոչ ոքի խլել մեզանից այդ հարստությունը,որոնք սերնդից սերունդ փոխանցվել է հայ ազգի զավակներին

Օգտագործված գրականության ցանկ

1. Zatsepina M. B. «Ռազմական փառքի օրեր. Նախադպրոցականների հայրենասիրական դաստիարակություն»
2. Դմիտրիևա Ե. Ա. «Հայրենասիրական դաստիարակությունննախադպրոցական ուսումնական հաստատությունում»
3. Bazarova O. B. «Նախադպրոցականների բարոյական և հայրենասիրական դաստիարակություն»
4. Արապովա-Պիսկարևա Ն. «Իմ տունը». Նախադպրոցական տարիքի երեխաների բարոյահայրենասիրական դաստիարակության ծրագիրը.
5. Չիբուխչյան, Լ. Սարգսյան ՝ Մայրենի լեզվի պարապմունք, մանկապարտեզի ավագ խումբ՝ ուսումնամեթոդական ձեռնարկ: